

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ:
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեգործութիւնը Մօսկ-
վայում. Նամակ երեւոյթ. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերսուլի եօթնամսնամեայ
յօրեկանը. Արտաքին լուրեր.—ԽԱՆ-ԼՈՒՐԵՐ.
ՀԵՌԱՐԻՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆԻՔԻՆ հասարակական կեան-
քի ուսումնասիրութեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

«Медицинское Обозрѣніе» ամսագիրը հրատա-
րակել է հետեւեալ թւանշանները Մօսկվայի մէջ
1889 թվին եղած բարեգործութեան մասին, զա-
ղելով այդ տեղեկութիւնները Մօսկվայում հրա-
տարակաւ միհակագրական ժողովածուից:

Մօսկվայում 1889 թվին եղած բոլոր բարեգոր-
ծական զորամարտիւնների գումարը հասնում էր
25 միլիոն ռուբլու, իսկ բարեգործական հիմնա-
րկութիւններին նուիրված աշխարհ կայքերի արժե-
քը հասնում էր 23 միլիոն ռուբլու: Ամեն տարի
բարեգործութեան վրա ծախսվում է 7 միլիոն
ռուբլի: Ամեն տեսակ բարեգործական հիմնա-
րկութիւնների թիւը 495 է, ժամանակաւորապէս
կամ ժառանգապէս այդ հիմնարկութիւններից 1889
թվին օգնութիւն են ստացել 73,633 հոգի չբա-
ւորներ, իսկ յիշեալ հիմնարկութիւններից դուրս
այս կամ այն ձևով օգնութիւն հասցրած է
353,933 հոգու: Բացի դրանից 120,000 հոգի չբ-
աւորներ օգնուել են գլխաւոր ձրի կամ ժամ-
անակաւորապէս և ժողովրդական ճաշարանից: Ին-
քիշակական այլ և այլ հաստատութիւնների թիւը
Մօսկվայում (հիւանդանոցներ, բժշկանոցներ, ման-

կաւարձական տներ և այլն) 66 է և նոսնց վրա
եղած ծախսը 13,31,000 ռուբլու գումարի է հա-
տար: Այդ հաստատութիւններն ունեն իրանց
անհատական գումարներն ու մեծագին անշարժ կա-
քերը: Վերսուլեալ թիւն քաղաքի բժշկական այդ
հիմնարկութիւններից օգտվեցան 53,750 հոգի,
իսկ այդ հիմնարկութիւններից դուրս՝ 3,32,358
հոգի:

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Հօկտեմբերի 30-ին

Հօկտեմբերի 13-ին տեղի ունեցող ժողովարանի դա-
նիմով սիրողների խումբը խաղաց «Թուղթ» խա-
ղացողի կեանքը, որի եկամուտը յատկացրած էր
յօգուտ Ռուսաստանի սովիւնների, իսկ 27-ին
տեղի ունեցող սիրողների խումբը նոյն նպա-
տակով տուեց «Աշուն» («Осень») երեք գործող-
թիւնով կոմիդիան: Հայոց ներկայացումից եկա-
մուտ եղաւ 124 ռուբլի, ծախս 65 ռուբլի: Եւս-
պէս որ գումար արդիւնք մնաց 59 ռուբլի, իսկ
ուսումնական ներկայացումից մուտք եղաւ 314 ռուբլի,
ծախս 114 ռուբլի, դուրս արդիւնք մնաց 200
ռուբլի: Հայ սիրողները իրանց առաջին ներկա-
յացումը այդ նպատակին տուեցին զինուորապէս
այն պատճառով, որ մարդկային աղէտների ժա-
մանակ, լինեն նրանք այլազգի և այլաթիւն մի
ժողովրդին հասած կամ ոչ, պէտք է ձեռք մկնել
և օգնութեան հասնել, միմիայն, երբ այդ ա-
ղէտը հասել է այն աստիճանի, որ, ինչպէս լրա-
գիրներին հաղորդում են, քաղցածութիւնից, մահ-
կան դէպքեր են պատահել: Ռուս հասարակ դա-
սակարգը շատ բարեւ և իսկապէս քրիստոնեայ ժո-
ղովուրդ է, ով որ եղել է այդ բոլոր ժողովրդի մէջ
նա նկատել է նրա լաւ կողմերը, և այդ բանը աշ-
քի առաջ ունենալով, թատրոնաւերների խումբը իր

առաջին ներկայացումը այդ նպատակին որոշեց:
Բայց չը նայելով նպատակին և ներկայացմանը, որին
ներկայ էր տեղիս պ. նախնադպեւերը, փոխ-նա-
խնադպեւեր և նախնադպեւական դատարանի դատա-
խաղը, հայ ժողովուրդը բոլորովին համարեա
բացակայ էր, այնպէս որ դաշինք մեծ մասամբ
դատարկ էր: Հայ սիրողների խումբը այդ առա-
ջին անգամն է, որ իր ներկայացմանը այդպիսի
դատարանի անտարբերութիւն է տեսնում: Ե-
րևանի հայ հասարակութեան կողմից: Այդ հասա-
րակութիւնը պէտք է գէթ այս անգամ ցոյց տա-
ր իր կարեկցութիւնը մի այսպիսի աղէտի ժամանակ:
Վաճառական դատակարգը, որը յայտնի է իր ան-
տարբերութեամբ, բոլորովին փայլում էր իր բա-
ցակայութեամբ: Ռուսաց ներկայացումը բոլոր-
ովին հակառակ էր. չը նայելով պէտքայն անա-
ջող ընտրութեան, դաշինք ժողովուրդով լի էր, բո-
լոր տոմակները ծախված էին, և մի բան, որ
աչքի էր ընկնում, այդ ներկայացմանը գտնուող
հայ հասարակութիւնն էր: Չարմախի է, թէ
մայրենի լեզուով և նոյն նպատակով արվող ներ-
կայացմանը հայ ժողովուրդը չէ դալիս, իսկ նա
վարում է, երբ ուսումնական ներկայացում է: Մենք
որիշ կերպ չենք կարող այդ բացատրել, եթէ ոչ
այն բանով, որ նրանք ուզում են իրանց ցոյց
տալ: Չէր կարելի արդեօք դալ և հայոց և ուս-
մաց ներկայացմանը:

Հայոց այդ խումբը պատրաստվում է տալու
տեղիս թեմական դպրոցի օգտին մի ներկայա-
ցում, բայց ցաւալին այն է, որ հայ կանայք և
օրիորդներ մերժում են ներկայացմանը մասնակ-
ցել և այդ պատճառով ներկայացումները դժուա-
րութեամբ են գտնու գալիս: Երեւի մեր հայ օրի-
որդները իրանց մասին մեծ կարծիք ունեն, որ
արհամարհում են այդպիսի բարի նպատակներին
իրանց աշակցութիւնը ցոյց տալ:

Բամբակի առևտուրը արդէն սկսվել է: Ռու-
սաստանի ֆիրմաները ուղարկած ունեն իրանց
ներկայացուցիչներին, որոնք մեծ քանակութեամբ
սկսել են բամբակ առնել: Մի տարի առաջ այդ
բամբակ առնողները առաջարկեցին քաղաքին
փող տալ փոխադարձաբար, որպէս զի քաղաքը
մի ծածկ չէին քաղաքի հրապարակում, որի տակ
դարավեն բամբակները և չը փչանան անձրևից:
Այս տարվայ սկզբում քաղաքը կապալով տուեց
այդ ծածկի շէնքը մի թուղթին, որը պաշտպա-
նութիւն գտնելով (ինչպէս առհասարակ մեր
գումայի ձայնաւորների կողմից միշտ կրկնվում է)
գումայի մի քանի ձայնաւորներից, չինաց ծածկը
պայմանին և նախահաշին բոլորովին հակառակ,
և այդպիսով պատճառ եղաւ, որ դուման մաս-
նագէտներ նշանակեց նայել ու շինութիւնը և այդ
մասնագէտները երկու անգամ գտան, որ ծածկը
ամուր չէ, բայց և այնպէս մեր դուման իր մի
ժողովում վճեց ընդունել ծածկը: Այդպիսով
այդ կապալաւուն երես առնելով և պաշտպանու-
թիւն գտնելով մի քանի հայ վաճառականներից և
շատ թուրք ձայնաւորներից, գործը ձգձգեց և
այսօր էլ չէ ուզում պայմանին համաձայն չարու-
նակել շինութիւնը և այս տարի քաղաքը մի քա-
նի հազար ռուբլի կորցնելու է այդ ծածկից: Ե-
կամուտ չը ստանալու պատճառով:

Մեր բոլոր հիմնարկութիւնները սկսել են ի-
րանց գործունէութիւնը, միայն Բարեգործական
ընկերութիւնն է, որ ոչ մտածում է ընթերցարա-
նը բանալ, ոչ ժողով հրաւիրել վերապահող
յանձնաժողովից հաշիւները ստանալու և ոչ էլ
աշխատում է մի ներկայացում կամ երկուրդ կազ-
մել յօգուտ ընկերութեան: Այդ ընկերութիւնը
տեղիս հիմնարկութիւններից թվում աւելի օգնու-
թիւն է գտնում, երբ ներկայացում է արվում նը-
րա օգտին, գոնէ մինչև այժմ եղած բոլոր ներ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԻԹԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻ-
ՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Գնացե՛ք միշտ ձեր դարու դա-
րափարների ետեւից, նրանք
ձեզ կաշկանդեն, եթէ դուք կը
հետեւէք այդ դարափարներին,
նրանք ձեզ կը յափշտակեն,
իսկ եթէ դուք այդ դարափար-
ների հակառակ կերթաք,—
այն ժամանակ նրանք ձեզ
վայր կը դրոնեն:

Բարեգործութիւն

Ցան և իննը տարի անցած, երբ մեր
հասարակութեան ուղադրութիւնը դարձրին զէպի
գաւառը, շատ քիչ մարդիկ հետաքրքրվում էին
այդ աշխարհով. այն ժամանակվայ մամուլը ո-
չինչ տեղեկութիւն չուներ գաւառի մասին, իսկ
ինչ որ վերաբերում է մեր վաթսուական թուա-
կանների գրականութեանը, նա էլ ոչինչ որոշ,
ոչինչ ամփոփ բան չէր տալիս մեր ժողովրդագի-
տութեան մասին: Միւս կողմից մեր այն ժամա-
նակվայ թէ պարբերական մամուլը և թէ գրա-
կանութիւնը, մասամբ կիսագիտական, կամ գու-
ցէ աւելի որոշ կը լինէր—պսակաօգիտական և
մասամբ էլ կրեական ընտրութիւն ունենալով,
զերթէ ոչինչ կապ, ոչինչ հաղորդակցութիւն չու-
ներ մեր ներքին կեանքին, մեր ներքին գործերի
հետ: Հասարակական կարծիք, սրան արտայայ-
տող հասարակութեան մի որոշ դասակարգ, որ
ինտելլեկտուալ անունն է կրում, մենք չունէինք:
Մենք չունէինք նոյնպէս և մեր գաւառում նոյն
իսկ անհասանել, որոնք հետաքրքրվէին դրամով,
իսկ ինչ որ վերաբերում է մեր թէ սպիտակ
թէ մանաւանդ կուսակցութեան հոգեւորականութեանը,
մեր հասարակութեան այդ դասակարգը, ինչպէս

և մի քանի դար անցած, հաստատվում էր
իր stasus-quo-ին...

Բայց դուք գիտե՛ք, որ ժամանակները փոխվում
են, նրանց հետ միասին առաջ են գալիս կեանքի
նոր և երբեմն խիստ և որոշ պահանջներ, այդ
պահանջների առջև խոստովանում են հին պայ-
մանները և այդպիսով երբեմն տիրապետող տե-
ղի է տալիս աւելի կերտոր, աւելի համապա-
տասխան, աւելի ժամանակակից դուրս է աւել:
Այդպէս էր և մեզանում: Չեզանից ամեն մէկը,
ընթերցող, ի հարկէ, յայտնի գաղափար ունի մեր
մամուլի, մեր գրականութեան նորագոյն պատ-
մութեան մասին: Այդ պատմութիւնը յայտնի և
որոշ սկիզբ է ստանում տասն և իննը տարի
անցած և դուք գիտե՛ք արդէն, որ 1872
թվին և մենք կարդացինք Սէյա Աբապի Qu'est ce
que c'est... Այդ ժամանակից մենք սկսում ենք
հետաքրքրվել և մեր գաւառով. տասն և իննը
տարվայ ընթացքում, դուք տեսնում էք կազմա-
կերպվում են որոշ կարծիքներ և ճաշակներ,
տասն և իննը տարվայ ընթացքում մեր մամուլը
քայլ առ քայլ սիստիմատաբար, ժողովրդաց-
նում է տպագրական խօսքը: Գաւառները յայտնի
քաղաքացիութիւն են ստանում մեր գիտակցու-
թեան մէջ, մեր ժողովրդի միջից, մէկը միւսի
ետեւից, առաջ են գալիս այնպիսի նշանաւոր դը-
րոշներ, որպէս Ռաֆֆի, Աղայեան, Լէօ և շատ
ուրիշներ, խիստ պահանջներին զիջանող է հա-
ղիսանում և մեր աւանդական հոգեւորականու-
թիւնը և դուք տեսնում էք, թէ ինչպէս մեր հա-
սարակութեան այդ դասակարգի միջից ևս յայտն-
վում են անհասանել, որոնք թօթափելով իրանց
վրայից դարձրել հնութիւնը, մեր գիւղերում ժո-
ղովրդի հասած պահանջների կարիքները թարգ-
ման են հանդիսանում: Եւ չեմ ուզում պատեղ
յիշել, և ի հարկէ, մեր հոգեւորականութեան այն-
պիսի հեղինակութիւններ մասին, որպէս, օրի-
նակի համար, Սեդրակեան. այդ տեսակ անուննե-
րը եղակի լինելով մեր կացութեան պատմու-

թեան մէջ, տեղ չեն կարող ունենալ մասնաւոր
անունների չարքում:

Գալով ամեն մի առաջադիմութեան հիմքին,
ուսումնասիրական գործին, դուք գիտե՛ք արդէն,
որ այդ գործը նոր ընթացք, նոր կազմակերպու-
թիւն է ստանում մեր ժամանակ և իննը տարվայ
ընթացքում: Ոչ մի ժամանակ մեր դպրութեան
պատմութեան ամբողջ տարածութեան վրա, ու-
սումնասիրական այնպէս լայն տեղ չէ գրաւել մեր
կեանքի ներքին պահանջների շարքում, որպէս
մեր յիշած տարեշրջանի ընթացքում, դուք տես-
նում էք, թէ ինչպէս մէկը միւսի ետեւից, այս և
այն գիւղում, աւանում, հիւնում են ժողովրդա-
կան ծխական ուսումնասիրաներ, նրանց կից գրա-
տներ, ընթերցարաններ, բեմեր, փոքրիկ բարե-
գործական ընկերութիւններ և այդ բոլորը, բոլո-
րը, ընթերցող, որպէս մի ընդհանրական այն, այն-
պէս արեւմտաց առաջ տարաւ մեր մինչև այն ժա-
մանակ նիւրհող կեանքը և ի պարծանք և ի պատիւ
մեր տոկոսնութեան, պէտք է խոստովանենք այս-
տեղ, որ մեր այդ տարեշրջանում լարված տեն-
դային առաջադիմութիւնը պէտք է մի տեսակ
նմուշ համարենք հեռու Արիւսի խորքերում եւրո-
պական քաղաքակրթութեան պատուաւորու-
ղործում:

Չէ անցնում մեր այդ նոր կեանքի դարադրելի-
ն և տարը տարի և դուք տեսնում էք, թէ ինչպէս
ուսումնական թւականների սկզբում կատարեա-
պէս յուզվում է մեր հասարակաց կարծիքը մա-
մուլը և թատրոնը ծաղկում են, տպագրական
խօսքը պահանջ է դառնում մեր երկրի նոյն իսկ
խորքերում ամեն բան ժողովրդականանում է և մա-
մուլ և գրականութիւն, և բեմ, և արուեստ,
և դպրոց, և ճաշակ, և դպրացունք: Կցեցե՛ք այդ
բոլորին և պատմական քաղաքական մի քանի
փայլուն և իրականութեամբ երբեմն մօտ տեն-
չանքներ և դուք կը ստանաք մի ամփոփ հակա-
ցողութիւն մի կատարելապէս, մեր կարծիքով
վերջացած ժամանակի շրջանի մասին: Մեր գի-

տակցութեան մէջ այդ դեռ կենդանի ժամանակնե-
րից պահպանվել են, ի հարկէ, բացի մի քանի
իրականացած երևոյթներից, յիշողութիւնների մի-
այն և ես կը ցանկայի այդ յիշողութիւններից
մի քանիսը ներկայացնել ձեր դասաստանին, ըն-
թերցող, դրանցից ամեն մէկը յայտնի կերպով
կապված է «Մշակի» տասն և իննը տարվայ գա-
լութեան պատմութեան հետ և ես կարծում եմ,
որ իմ փոքրիկ պատմութիւնը ձեզ համար մա-
սամբ թէ ծանօթ և թէ ձեր արտին մօտ պէտք է
լինի: Այստեղ եւս հարկաւոր եմ համարում նախ
յիշեցնել ձեզ ձեր աչքերի առջև կատարված մեծ
հասանք քաղաքներից դէպի գաւառները, դուք
մտաբերում էք, ի հարկէ, այդ տարիները, շատե-
րի յիշողութիւնների մէջ նրանք որոշ տեղ ընդ-
նամ կը լինեն, այդ հոսանքով փակվեց մեր
կեանքի մի նշանաւոր շրջան և այդ շրջանը աւե-
լի սերտ կապված է մեր ինտելլեկտուալ պատ-
մութեան հետ. այդ ինտելլեկտուալ մի քանի
արմատներ գցեց մեր գաւառում և ես կը ցան-
կանայի պատմել ձեզ, ընթերցող, թէ որքան
աջող պատուաստ էր այդ: Եւ կը փորձեմ ներ-
կայացնել ձեզ սեփական զիտողութիւններ միայն:
Ունենք արդեօք մենք գաւառում մեր հասարա-
կութեան մէջ մի դասակարգ, որ ինտելլեկտուա-
նան է կրում, ինչ տեսակ անձնաւորութիւն-
ներից է բաղկացած այդ դասակարգը, ինչ է ա-
նում, որտեղ և ինչպէս և թէ վերջապէս ինչով
է արտայայտվում իրանց հաւատական գործու-
նէութիւնը. իսկ որքան համապատասխան է մեր
հասարակութեան այդ դասակարգը մեր կեանքի
արդի պահանջներին և թէ որքան բարեխիղճ
կերպով է կատարում նա իր պարտաւորութիւն-
ները դէպի ժողովուրդը, ամբողջ: Որի սկզբնա-
կան կրթութիւնը, այսպէս թէ այնպէս, յանձն-
ված է նրան, այդ եւ ձեզ մեր թողնում ասելու, կը
խնդրեմ միայն, որ եթէ մեր պատմութիւնը առաջ
բերի ձեր մէջ մի քանի ամբողջ մտածանքներ և
մի տեսակ բացասական եղբայրացութիւն մեզ

կայացուցանելը այդ ընկերությունը առևտրի արդյունք են տուել, քան միևս հիմնարկություններին:

Առերևույթ չեն համարում ուղղել «Մշակի» № 63 և 119 համարներում հաղորդած սխալ տեղեկությունները. դավալուր դպրոցը մինչև օրս էլ փակ է. մի ուսուցիչ մի ամիս առաջ գնաց այնտեղ և փակ գտնելով դպրոցը՝ վերադարձաւ. Չեզդարմուրի դպրոցը անցնալ տարի բոլորովին փակ է եղել. նա այս տարի նոյնն է, ինչ որ անցնալ տարի էր: Ղամարուրի դպրոցի եկամուտները չեն անկացել, անցնալ տարի էլ ունեւր 800 ռ. եկամուտ, այս տարի էլ նոյն եկամուտը ունի: Նախնիական դպրոցը երկդասեանի չէ փոխվել, այդ դպրոցը անցնալ տարի էլ մի դասեան էր, այս տարի էլ մնացել է միդասեան: «Մշակի» № 119-ի մէջ հաղորդած լուրը, որ Բաշկիրական Բաշկերական դպրոցները փակ են և ուսուցիչներ պակաս են, բոլորովին սխալ է. այդ երկու դպրոցներ էլ այժմ ուսուցիչներ կան, բայց ցատկային այն է, որ Բաշկերականի և ուրիշ մի քանի դպրոցներում ուսուցիչներ նշանակած են բոլորովին անընդունակ մարդիկ, այն ինչ, երևանի թեմական դպրոցը աւարտող սաներ այժմ երեսունը անգործ պոտուում են: Գեռ անցնալ տարի Բաշկերականի դպրոցը ուսուցչի վարձը չէր տուել, և ուսուցիչն էլ դատարանի միջոցով էր պահանջում իր վարձը. և այն էլ օգոստոսի 15 թ. կարելով միայն կարողացաւ ստանալ:

Ամսիս 28-ին այստեղ առաջին անգամ ձիւն եկաւ և սկսվեցան ցրտերը: Այգեկները բոլորովին չէ վերցնել—չառ պարզ է, որ ցրտերը կը մնան խաղողին և վաղերին: Տեղիս թուրքերից չառերը մինչև օրս էլ հարած են համարում իր պարզ խաղողը ծախել գինի չինելու համար: Այդ պատճառով էլ կան թուրքերը որ այգիները չեն քաղել և սպասում են քիչ քիչ ուսուցիչ համար ծախել: Շատ պարզ է, որ ցրտերը բոլորը կը փչացնեն:

Տեղիս թէ Գայեանեան օրիորդաց և թէ Նորք քաղաքամասի դպրոցներում կրօնուսուցիչ—քահանաները նշանակված են հոգաբարձութեան նախադասներ, իսկ դա հակառակ է դպրոցական կանոնադրութեանը, որով ուսուցիչներին, առհասարակ արգելում է հոգաբարձու ընտրվել:

Այս տարի աշնանը անժամանակ եկած անձրևները շատ մեծաներ հասցրին երևանի նահանգի

սարսաղ գաւառներին: Մինչև այսօր Նոր-Բայազետի և Գարաշիշազի կողմերում դեռ կայելը չեն վերջացրել, և կը մնան գարնանը կայելու: Ասում են որ քիչաշը (հացաբոլսը) շատ տեղերում սկսել է նորից բոյս արձակել: Բայց և այնպէս այստեղ հացը էժան է:

Ս. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոյս տեսաւ թիֆլիսում, Տիգրան Նազարեանցի տպարանից, «Էվէլինա» վերնագրով Գրիգոր Արծրունու մէջը (հոգեբանական էտիկա): Գինը 50 կօպէկ է, պօստի ծախսով հանդերձ: Ետևում է «Մշակի» խմբագրատանը, թիֆլիսի գրադարանում և Տէր-Յովսէփեանցի (Նիֆիտեանի) ծխախոտի մագազինում, «Կովկաս» հրատարակչի տակ:

Ստացանք Մարտա կղզուց հետեան հեռագիրը. «Հոկտեմբերի 30-ին, տեղի Դաշնամեան առաջին անգամ երգեց «Տրուպուրէ» օպերայում «Teatro Reale» թատրոնում և մեծ աղոթութիւն ունեցաւ: Հասարակութիւնը վարձատրեց հայ երգչին ողբերով Ժողովարարութիւններով և մի տան անգամ բեմ կանչեց նրան»:

ԱՐՄԱՒԻՐԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 28-ին, երկուշաբթի 10-ին, Արմալիում տեղի ունեցաւ արեւմտեան յարձակումը արքունական պօստային կառքի վրա: Ութ հոգի աւաղակներ յարձակվելով, սպանեցին պօստային աստիճանաւորներին մէկին, իսկ միւսին ծանր կերպով վիրաւորեցին: Սպառնալիք է վիրաւորելով ձեռք գցեցին 31 հազար ռուբլի արքունական փողեր: Աւաղակները անհետացել են»:

Իր-Իրիթ մեզ գրում են. «Հոկտեմբերի 27-ին, այստեղ և շրջակայքում ձիւն եկաւ և եղանակը մի անգամից ցրտեց: Սա մի արտասովոր երևոյթ է. սովորաբար մեզ մօտ ձիւնը սկսում է գալ միմիայն նոյեմբեր կամ դեկտեմբեր ամիսը: Սակայն ձիւնը անմիջապէս հայտնւում է: Գեռ աշնանացանը աւարտված է: Գործն է այս տարի առատ է, բամբակն էլ նմանապէս»:

Իր-Իրիթ մեզ գրում են. «Այս տարի մեր դպրոցներում նոր աշակերտների մի այնպիսի

հոսանք է սկսվել, որի նմանը երբեք չէ տեսնված: Աշակերտներին բերում են ոչ թէ միայն իդրից, բայց և մօտակայ գիւղերից: Դա ապացոյց է, որ հայ գիւղացու համար ուսման կարիքը անհրաժեշտութիւն է դարձած»:

Կուրանի շրջանում անասունների մէջ հիւսնադուրիւնը սաստկացել է. մի շարքովայ ընթացքում, ինչպէս հաղորդում են տեղական լրագրողները, 696 գլուխ խոզոր անասուններ են հիւսնադուցել, որոնցից 113 գլուխ իրանը են սաստկել, իսկ 583 գլուխ տէրերն են սպանել: Երկուսն էլ հիւսնադուրիւնը առելի չը տարածվի: Մի և նոյն ժամանակամիջոցում հիւսնադուցել են 42 գլուխ ոչխարներ, որոնցից մի մասը իրանը են սաստկել, իսկ միւս մասը տէրերն են սպանել:

Հոկտեմբերի 31-ին, Անդրկովկասեան երկաթուղու «Գօմի» կայարանի մօտ, երբ ապրանքատար, № 55, գնացը Բաթումից թիֆլիս էր գալիս, գծի վարպետը, թէվաճէ, աղգանտնով ընկաւ գնացքի տակ: Գնացը դժբաղդին միջոց կէս արաւ: Ասում են, որ այդ մարդը դեացքի տակ է ընկել անձնասպանութիւն գործելու դիտաւորութեամբ:

Թիֆլիսում ամիսիս 1-ից սկսվեց նոր դինուրակոյնների վիճակահանութիւնը. ընդամենը վիճակագրված են 880 հոգի, որոնցից զինուորագրութեան պէտք է ենթարկվին 80 հոգի:

«НОВ. ОБОЗР.» լրագիրը հաղորդում է, որ մի քանի ձայնաւորներ մի նախագիծ են առաջարկել թիֆլիսի դուռային, որպէս զի թիֆլիսում բացվի մի առևտրական ուսումնարան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԻՐԻՍՈՎԻ ԵՌՄԱՆԱՆԱՄԵԱՅ ՅՈՐԷԼԵԱՆԸ

Կէս օրը արդէն վաղուց անցել էր, երբ Վալդէյեր մօտեցաւ մի այնպիսի ընծայով, որի նմանը թէ իր հանձնարել մտքի և թէ թանգազնութեան կողմից անշուշտ ոչ դիւ դեռ ևս չէ արված: Գեռ զարեւոտարի մի արդարած զուտ ոսկորը շինված: Զուրկ կը լինի թերթիկը դրամագէտների ցուցակները, ապուրի ափսէի չափ մի շքադրամ դունե-

մութիւն ունի. այդ դասակարգը կաղմակեղակել է մեր օրերում, մեր յիշած պայմանները և հանգամանքները ներքոյ, առելի ճիշդ կը լինի—նա դեռ նոր է սկսում իսկ օրվի. այդ փորձի խմբի մարդկանց պատկանում են, զվարարապէս, ծխական ուսումնարանների ուսուցիչները, երկրաստորը քահանաները, այստեղ և այնտեղ պատահող կուսակալներ, հոգեբանականները և մի քանի ընկերակցութիւններ, որոնք չափաւոր նկատական ապահովութիւն ունենալով իրանց շրջանում, կարողանում են պատահել նրանց պաշարող թանձրութիւնը և միանալ իրանց հասակակիցներին մի փղբրիկ շրջանի մէջ:

Ահա ընթերցող, մեր գաւառական հասարակութեան երկու որոշ դասակարգ, որոնք գաւառի ինտելիգենցիայի անունն են կրում և ամեն մէկը առանձին առանձին պրկտիկաներ ունենալով, բոլորից, ժողովրդից բարձր համարվելու, նրան օրինակ դառնալու, նրա շահերին և պէտքերին լիարժան և հարկաւոր դէպքերում պաշտպան հանդիսանալու... Անդրկովկասը, որպէս հին արեւելեան աշխարհ, ներկայացնում է մեզ Ասիայի այն անկիւններից մէկը, որտեղ դարերի ամբողջ տարածութեան վրա գոյութիւն են ունեցել հասարակութիւնները երկու որոշ դասակարգեր, որոնց մէկը, ժողովրդաբար, միշտ լինել է, միւսը, առհասարակ նոյն իրաւունքները հիման վրա, միշտ հպատակվել է չը նայելով որ այդ աւանդական ժամանակները վաղուց արդէն անցել, պատմութեան սեփականութիւն են դարձել: մեր կեանքում այդ երկու որոշ և վերին աստիճանի նշանաւոր սկզբունքները, մինչև այժմ տակաւին պահպանվել են իրանց ամբողջութեամբ մեր երկրի ամբողջ տարածութեան վրա: Անդրկովկասի բոլոր անկիւններում, այստեղ և այնտեղ, դուր կը գտնէք մէկընեւ, իսկներ, բէգեր, աղաներ, կան ժողովրդի ցեղեր և մեծ տներ, որոնք չը նայեն իր ժամանակներին և հանգամանքներին փոխվելուն, կարողացել են պահպանել վաղմի դրութեան

լու համար: Վերստի յարգողները աշխարհիս ամեն ծայրից առաջին հրաւերին անմիջապէս հետեւելով, աշխատակցել էին այն բաղաժախ արձաններին, որ վերստի ինքն իրան, aere perennius կանգնել էր, մի նորն էլ աւելացնել, որ թէև ոսկուց, այսու ամենայնիւ մինչև յաւիտեան նրա գործունէութեան մասին պիտի խօսէ և յաջորդ սերունդներին մեծ վարպետի դէմքը պիտի առնէ: Հանձնարել այլաբանութիւնը, որ ներկայացնում է այդ շքադրամի վրա ճշմարտութիւնը խիստ քոյր բանալիս, այդ դէպքում ամենին ծայրայեղութիւն չէ: Այդ թանգազն ընծան մատուցանելիս Վալդէյեր մի և նոյն ժամանակ առեց և բարեկամ: մեր պատգամաւորութիւնը գալիս է յանուն մի բաղաժախ և շատ տարած, մի յանձնարարութիւն, ձեռք մեծ, հիմնարկու երջանիկ հետազոտող, սրամիտ, ընտելացող հանձնարել իմաստասիրի, հազարաւորների հաւատարիմ, անխնայ ու դրդիչ ուսուցիչ, ձեռք առնող գիտութեան մի ընծայ մատուցանել, որ պիտի վայել է լաւագոյններից մէկին, Բուրժուի վերստի:

Մեր համեստ հրաւերը այս ընծային մասնակցելու ամենահեռաւոր տեղերում համակրութիւն դրաւ: Ամբողջ երկրագնդի երեսից, Եւրոպայից, Ասիայից, Աֆրիկայից, Աւստրալիայից, Ամերիկայից, մասնաւոր այն մեծ թաղի ու մերով առաջագիտող Միացեալ-Նահանգներից, առատ առատ հոսեցին ընծայաբերութիւնները և մեզ միջոց տուին մեր ընծան այնպէս կատարելաւ և այնպէս արժանաւայել յօրինելու, որպէս ցանկանում էինք:

Մարդու ոսկոր—կոյր այդ վայ լինի մեր մաքուր զգացման—ստեղծել է մեզ հետ այստեղ կանգնած վարպետի, Անտոն Դարֆի, որ տակաւին մի քանի շաբաթ առաջ արժանացաւ քաղաքիս մէջ կայացած միջազգային գեղարուեստական հանդիսի առաջին պատանշանին, հանձնար ու ձեռք մի իր, որ թերեւ մէկ հատիկ է իր տեսակուց:

Այս մեծ ոսկեայ շքադրամը, որ ես վարպետի ձեռից առնելով ձեռք եմ տալիս, պիտի ցոյց տայ ներկայ և ապագայ սերունդներին թէ՛ ահա իմ կենսից:

Այստեղ պէտք է ասեմ ձեռք ընթերցողի հըր, ժամանակների հետ միասին, սկսեց հանաւ և այդ մարդկանց անցնալ նշանակութիւնը, նրանք սկսեցին զիմել ամեն տեսակ միջոցներին իրանց ձեռքում պահպանելու այն գործութիւնը, որը աննկատելի կերպով սահում, գնում էր նրանց ոտների տակից, ամեն մի աւելորդ ժամ աւելի և աւելի խախտում էր նրանց մեծամեծ ամբողջութիւնը և դուր արդէն գիտեց, թէ ինչպէս մէկը միւսի հետեւից սկսեցին ինքն կեանքի հրապարակի վրայից այն բոլոր մարդիկ, որոնք երբեք Անդրկովկասի աղգաբանութեան նեղուկներն էին համարվում: Այն ժամանակաւոր, անցողական օրըցը, որին զիմեցին մեր երկրի գրեթէ բոլոր նշանաւոր մարդիկ, իրանց տակաւին անցնալով դոյրը, կորցրած նշանակութիւնը ժողովրդի մէջ պահպանելու համար, պէ տալիս է ծառայութիւնը:

հետաքրքրող խնդրի մասին, չը վերադրել այդ մեր սեփական կարծիքներին և ճաշակին այդ հարցի վերաբերմամբ:

Ով ձեզանից, ընթերցող, թերթիկ է «Մշակի» տան և ինքն տարվայ համարները ով ձեզանից հետեւի է, երկու տարիների ընթացքում, այդ լրագրից, նա յայտնի դառնալու ունի, անշուշտ, թէ ինչպէս պարբերաբար արժարծովում էր մեր մէջ ինտելիգենցիայի խնդիրը, նրա դերը, նրա պարտականութիւնները, նրա գործելու շրջանը: —Խնտելիգենցիայի խնդիրը, ոչ թէ մեղմանում, այլ նոյն իսկ Ռուսաստանում, ուսաց հասարակութեան մէջ, դեռ տակաւին բաց հարցերից մէկն է համարվում. այդ խնդրով զբաղվում է մինչև այժմ ուսաց թէ մամուլը և թէ փամա-նակակից գրականութիւնը, այդ հարցով զբաղվում են Ռուսաստանի ամենաառաջնորդ գրողները և չը նայելով ուսաց կուլտուրայի մեղ համար դեռ նախանձելի դիրքին, դուր միշտ, այնու ամենայնիւ, այստեղ և այնտեղ կարող էք տրոտուշներ լինել ուսաց կեանքի բարդաւած ման ամենադեղնոված նախանձախնդիրների բերանից՝ իրանց գաւառական ինտելիգենցիայի անկատարելութեան մասին և այդ գնահատները աւելի քան իրաւացի են այն պատճառով, ընթերցող, որ ինտելիգենցիան Ռուսաստանում, այսպէս թէ այնպէս, ներկայացնում է իրանով մի որոշ, արդէն հասունութիւն ստացած մի ամբողջութիւն: իսկ ինչ որ վերաբերվում է մեր գաւառի ինտելիգենցիային, պէտք է ասենք այստեղ որ ոչ թէ նա, այլ նոյն իսկ նրա մասին դադա-փաղը մեր աշխարհում նոյնքան նոր է, որքան նոր է այդ հարցը մեր մամուլի, մեր գրականութեան մէջ: Բայց այնու ամենայնիւ դուք գիտեք արդէն, որ դուրեւրեւրաբար այդ հարցի սկզբնա-կան արժարծման հետ յարուցվեց ինտելիգենցիայի ապակեան տր օն աջ մասն խնդիրը. այդ վերջին հարցը, պէտք է ասել, մեծ զարկ տուեց

դիմ Գլխով, ահա նրա արարքները ու ստեղծարարությունները:

Սրա աջողակ նկարագրի պատկերը, մեծապատիւ ուսուցչական, զարգացում է այս գեղեցիկ արձանի առջև երևար. միւս երեսի վրա տեսնում էք զուր հետախուզութեան երկասարկութիւնը առաջ նայող հանձարին, որ ջանք ձեռքին պահած ազնիւ մի կնոջ կերպարանը առաջ գիտութեան քողը վերացնում է, բնութեան քողից լինելով նրա առջև բանալու համար: Չորս կողմից տեսարաններ ու նշաններ գիտութեան այն յարթակի ասպարէզից առած, որին զուր նուիրել էք ձեր աշխատանքը. այնուհետեւ Բերլինի ինքնահանգիստի անտառային-անդամադնայան դպրոցը, ձեր գլուխ բերած գործը և ձեր գործունէութեան տեղին և այդ բոլորի վրա ձեր կարճ բայց իմաստալից խօսքը, որ պիտի հնչէ ջանքի որ գիտութիւնը գոյութիւն ունի՝ Omnis cellula a cellula.

Համաձայն մեր հրաւերի մէջ նախատեսածին, և համաձայն ընդհանուր հաւանութեան թոյլ կը տանք մեզ յետոյ, մեծագումար մնացորդը ձեր ազատ անորոշութեանը առաջարկելու (զուրէ որ և է բարեգործական հիմնարկութիւն սկսելու կամ կիցքը բազմացնելու և այլն):

Մի և նոյն ժամանակ ձեր ընտանեաց անդամները պիտի ստանան մի մի օրինակ այդ շքադրամից արծաթից և արուրից (bronze) պատրաստած, այլ և մտադրութիւն կայ այդպիսիները ընծայել և համալսարաններ ու գիտութիւնների դպրոցներին իբրեւ անսփռ վկայ թէ ինչպէս եւ իրաւաբան ժամանակակիցները իմացան յարգել իրանց Բուրժուա Գլխովին և ընդունեցէ՞ք որեւէ, մեծագումար բարեկամ, մեր բոլորիս ուսուցիչն ու վարպետը, այս սիրուն ընծան այն խորին երախտագիտութեան և յարգանքի, որ տաճում է առ ձեզ համայն գիտական և բժշկական աշխարհը. թող նա ձեր սրտին նոյն բուռն և անկեղծ ուրախութիւնը պատճառէ, որ մենք զգում ենք այն ձեզ ընծայելով:

Եւ իրօք, անկարելի է աւելի կատարեալ և աւելի պատաւեր յարգանք ցոյց տալ: Այդ շքադրամի իւրաքանչիւր օրինակը կարելի է մի մի արձան համարել և ամեն մի քարոզագոյն դպրոցում մի այդպիսի արձան պիտի կանգնի: Վերջով ինքն էլ զգում էր այդ և իր զգացածը արտայայտել իր չնորհակալական պատասխանի մէջ: Մի բանի հետ միայն նա չէր հաշտուում, այն է, ընծայի թանգ արժողութիւնը: Սակայն հէնց թանգանութեան մէջ է յարգանաց հաւաստիքը: Այն թէ նրան մի նիւթական հատուցումն անելու համար էր, որպէս կատարում նկատել յօրեւարը, որ նրա յարգողները ընտրել էին այդ ձեռք իրանց երախտագիտութիւնը յայտարարելու: Ընծայի զուտ զողովարարական բնավորութիւնն է, որ իր բարձր արժէքի հետ միացած, կազմում է մի այդպիսի ըստ կարելոյն արժանաւայել պարգեւ: Ընդհանրապէս սովորութիւն է պատկառելի անձանց համար իբրեւ ընծայ այնպիսի առարկաներ ընտրել, որոնք թանգազին լինելով հանդերձ, լոյս իղէալական բնավորութիւն ունեն: Եւ ինչպէս որ քաղաքականութիւնը պահանջում է մի տիկնոջ ծաղիկ-ներ միայն ընծայել, ուստի այս ղէպըւմն էլ ընծայի ձեռք խորհրդաւոր էր և գեղեցկագոյն:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՀԱՅՅԱՐԱՍՅՈՒՅՑ

Յիւրիւն, 12/24 հոկտեմբ.

Առհասարակ արձակուրդները անցան արդէն, բայց որպէս տարբեր ամիս մի մարդու համար: Մի կողմ թողած բոլոր միւս դասակարգերը, մի ակնարկից հետո մատաղ սերնդի վրա և տեսնենք, թէ արդեօք արձակուրդները ծառայեցին իսկապէս իրանց բուն նպատակին, այն է այդ մատաղ ոյժերը վերականգնեցնելու, նրանց նոր ոյժ, թարմութիւն և աշխոյժ ներշնչելու: Գիտեալ կարող է սիրտս գուշակել, թէ այդ հարցը ձեռք մօտ նոյն պէս լուրջ ուշադրութեան է արժանացել և գրոնվել են գործին իսկապէս ձեռնհաս անհատներ, որոնք չեն բաւականացել լոյս գրա անհրաժեշտութիւնը ընդունելով, այլ միջոցներ են ստեղծել զրան իրադրութիւն և այդպիսով գոն մի կը կու ամսով քաղաքի ամառային ներկայում միջնորդից հեռացնելու միջոցներէր զուրկ վերջի էականներն տանել ղէպի ազատ բնութեան զիրկը, զովացնել այդ սեղմած կրօնքը սարերի մարտը և կենսատու օրով տալ նրանց կաղ-

մուածքին անհրաժեշտ թէպէտ համատ, բայց կազդուրիչ և ուժեղ սնունդ:

Եւ վերադառնում էի լայնցիւղից Յիւրիւն: Երբ մտանք Շվեյցարիայի սահմանները, կայարաններից միում գնացքը սովորականից մի քանի րոպէ աւելի կանգնեց, որովհետեւ հարկաւոր էր մի քանի վագոններ ևս աւելացնել, որպէս զի այդ միջոցին ամառանոցից վերադարձող դպրոցական մանուկները համար (այսպէս կոչված «արձակուրդների գաղթականութիւն», որն արդէն իր սեփական միջոցներով գեղեցիկ ամառանոցներ ունի Ալպիան սարերում) տեղ պատրաստվել: Մեր վագոնն արդէն ինչ էր ճանապարհորդներով, ուստի և տեղ չը կար աւելորդ: Բայց աշխոյժ մանուկների ներկայութիւնը զգալի էր ամեն մի ճանապարհորդին, որովհետեւ հարեան վագոններից լսելի էին երբեմն նրանց հիացմունքով լի բացականչութիւնները, երբ գնացքը սլանում էր սարերից դէպի անդունդը հոսող արագընթաց մի ջրըվէթի մօտից, երբ նրանց բարեկամական ուղջոյն ձայնը դաշտերում աշխատող գիւղացի մանուկներին էր ուղղված, և երբ լսում էր նրանց խմբովին խաղաղ երգեցողութեան ներդաշնակութիւնը:

Երբ հասանք Յիւրիւն, կայարանը լի էր այդ մանուկների սրտատուրով սպասող մայրերով, ջրաբերով և կամ մօտիկ ազգականներով: Ահա սկսեցին վագոններից իջնել մանուկները իրանց զուարթ դէմքերով և զարդարված Ալպիան սարերի գոյնզգոյն ծաղիկներով. գրկախառնութեան և համբոյրներին վերջ չը կար: Եւ դիտում էի այդ սրտաշարժ և գեղեցիկ տեսարանը: Մայրերը՝ ուրախութեան և երախտագիտութեան արտասուքը աչքերում, բռնելով իրանց մանուկների ձեռքերից ցրվեցան այս և այն ուղղութեամբ: Եւ մնացի կանգնած, իսկ իմ միտքը սլացած այդ րօպէին դէպի հեռու հայրենիք, ուր նոյնպէս կան հայկալ սարեր, որոնք կարող էին վերականգնեցնել շատ թուլացած ոյժեր, ուր նոյնպէս փայլում է գեղեցիկ արեւ և մեղմ դեփիւտը շոյում բերւաւոր ծաղիկներ. բայց ուր կնչ արդեօք մի ձեռք, մի սիրտ, որ յիշէր մուռացված մանուկին և առաջնորդէր այդ գունատ և մաշված էակին դէպի կենսատու բնութեան գիրկը:

Վ. Յ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Լորէ Համիլտօն, հոկտեմբերի 19-ին, Լոնդոնում մի ճառ արտասանեց, որի մէջ այն կարծիքը յայտնեց, որ անգլիական զօրքի Եգիպտոսից հեռացնելը կարող է կամ եւրօպական պատերազմ առաջացնել, եթէ անգլիացիներին տեղ մի ուրիշ ազգ կը զրաւի Եգիպտոսը, կամ անխիշատութիւն կը տարածվի վերոյիշեալ երկրում, եթէ ոչ մէկ ազգ չը զրաւէ փարաւօնների երկրը:

—Բոլոր երկրներին պարամիտներին անդամները կազմված խաղաղութեան կոնգրէսը բացվեց Հռօմում նոյեմբերի 3-ին: Չը նայելով երկու ամիս շարունակվող զօրեղ ագիտացալային, կոնգրէսի բացման ներկայ էին երկու հարիւր անդամներ, այն ինչ ութ հարիւր հոգի ցանկութիւն էին յայտնել մասնակցել կոնգրէսի նիստերին: Ամենից շատ եկել էին րումինացիք, այն է 11 հոգի: Գերմանացիք և ֆրանսիացիները եօթ եօթ էին: Կոնգրէսի անդամներին ուղղունեցին իտալական պատգամաւորների ժողովի նախագահ Բիանկէթի և Հռօմի քաղաքագլուխը: Բիանկէթին պատասխանեցին իտալացիներ արգել ներկայացուցիչները: Գերմանական պարլամենտի անդամ Բաուքալ յայտնեց, որ Գերմանիայի համակրութիւնը ամբողջապէս պատկանում է իտալիային և Հռօմին: Մատնացոյց անելով միջազգային պարլամենտի (կոնգրէսի) նշանակութեան վրա, Բաուքալ սկսեց խօսել այն բանի մասին, թէ ժողովուրդներից է կախված խաղաղութիւնը և թէ գերմանական ժողովուրդը անկեղծ կերպով ցանկանում է խաղաղութիւն: Բաուքալն ցանկութիւն յայտնեց, որ կապիտալիզմը տարածվի խաղաղութեան թագաւորութիւնը: Նիստի վերջում ֆրանսիացիներին կողմից խօսեց պատգամաւոր կոմս Դուլլի-Մալֆէ, որի ճառը ընդմիջվում էր հաւանութեան անդուհատ նշաններով: Բուռն ծափահարութիւնների ժամանակ Մալֆէ յայտնեց, որ թէպէտ ֆրանսիական երկրի սահմանները այլանդակված են, սակայն ֆրանսիան ներկայումս զօրեղ է և ոչ դուրս չէ վախճանում աշխարհիս երեսին: Մալֆէի ճառը գերմանական պատգամաւորների ղեգոհութիւնը արժեցնեց:

—Բերլինից հեռագրում են, որ Հիւրֆէլդի բանկային գրասենական սնանկութեան պատճառով բազմաթիւ բարձրաստիճան անձինք մեծ կորուստներ ունեցան: Գերմանական կայսրի մայրը, այլ Վիկտորիա կայսրուհին երկու հարիւր հազար մարկ կորցրեց, պրուսական Հէնրիխ պրինցը—կէս միլիօն, Զէյլից մինիստրը կորցրեց իր ամբողջ կարողութիւնը:

—Ֆրանսիայի ներկայացուցիչ Պաստի խաղաղութեան կոնգրէսում մի ճառ արտասանեց, որով ապացուցանում էր թէ միջազգային վէճերը պէտք է միջնորդ դատարանով կարգադրել: Վճռված է այդ դատարանի կազմակերպութիւնը մշակել և պատրաստել յաջորդ կոնգրէսի համար, որ կալանաւոր է վիճենայում 1892 թվին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պարսից Շահը այժմ 63 տարեկան է. թէև դեռ ամբակազմ և աշխոյժ է, բայց շատ է վախճանում հիւանդութիւնից և օրեկան մի քանի անգամ իրան ենթարկում է պաշտական բժշկի պ. Տօլօզանի քննութեան: Թէ ամառ և թէ ձմեռ Պարսկաստանի մայրաքաղաքում առաւօտեան ժամ մի 9-ից յետոյ չօք է լինում, այդ պատճառով Շահը առաւօտեան 4—5 ժամին է զարթնում. ժամի 12-ին նախաճաշի է անում. նախաճաշիկի ժամանակ Շահը գործի վրա ծաղապատիկ նստած է լինում, և նրա առջև դրված են լինում զանազան կերակուրներ, գլխաւորապէս բաղիւշացած ոչխարի միջ և փաւից: Շահը պատառաքաղ չէ գործածում և կերակուրները ձեռքով է ուտում, իսկ գինու փոխարէն քաղցր շաքարի և կաթ է խմում: Այդ միջոցին բոլոր պալատականները խոնարհարար կանգնած են մի կողմում և երգի-դաճութեամբ նայում են իրանի պետին. նրանք ոչ մի ձայն չեն հանում մինչև որ Շահը նրանցից բան չէ հարցնում, իսկ նրա հարգմունքին նրանք պատասխանում են կարճ և որոշ կերպով: Երբ որ Շահը նախաճաշիկը վերջացնում է, նախ նախաճաշիկին են նստում պրինցները, իսկ նրանցից յետոյ միւս պալատականները: Երեկոյան 8—9 ժամին Շահը ճաշում է: Ճաշի ժամանակ անպայման կամ եւրօպական երաժշտութիւնն պէտք է լինի, կամ սաղանդաւոր Շահը շատ է սիրում եւրօպական երաժշտութիւնը և պալատում եւրօպական երաժշտական մի քանի խմբեր կան, թէև այդ խմբերից ոչ մէկը կարգին չէ նուազում: Ճաշի ժամանակ Շահի հետ սեղան են նստում բոլոր պալատականները և մեծամեծները, օրինակ՝ սենեկապետները, արքայադատութեան, ֆինանսների և արտաքին գործերի մինիստրները, մեծ-վիզիրը և այլն: Ճաշից յետոյ Շահը գնում է հարկաւորան, ուր, ինչպէս ասում են, երեք հարիւրից աւելի կանայք կան: Շահի բոլոր կանայք առանձին-առանձին բնակարաններ ունեն, իրանց առանձին սպասարաններով, առանձին հողատարներով և վերահսկողներով: Իսկ հարկաւոր ջաշի-աղջիկները, որոնք դեռ Շահի առանձին ուշադրութեան չեն արժանացել, և այնքան մօտ չեն նրա սրտին, բոլորը միասին են ապրում և նրանց վրա հսկում է հարկաւոր ամենահասակով կինը՝ Հիւսնում Վալիդը, որ նրանց մօր պէս խնայաւոր է պահպանում է: Թէ որպիսի ազդեցութիւն ունեցաւ Շահի վրա Եւրօպայում նրա արած ճանապարհորդութիւնը, երևում է նրանից, որ նա իր ճանապարհորդութիւնից վերադառնալով, մայրաքաղաքը լուսաւորեց գաղով, կեկերական լուսաւորութեան համար մի քանի միջոցներով բերել տուեց Եւրօպայից մի ֆրանսիացի վարպետի հետ և իր պալատը սկսեց լուսաւորել կէկերական լուսով: Այժմ Շահը եւրօպական թագաւորների պէս իր ստորադասներին բարեկամ պատասխանում է գլխի խոնարհմամբ, որը առաջ չէր բարեհաճում: Բայց դրանից Եւրօպայի պէս իր երկրումն էլ մտքից պատգորտային սխալմը՝ արտասանման գնացողների համար: Դրանից աւելի նրա Եւրօպայում արած ճանապարհորդութիւնը ոչ մի քաղաքակրթական հետեւում չէ թողել:

Վ. Լյուբարով գտնվող գերմանական շէքսպիրեան ընկերութեան անդամներ դարձան Վիլհելմ II կայսրը, Բադենի մեծ դուքսը և Բաւարիայի պրինց-խնամակալ Լուիսօպոլ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԽՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

10-ի-10-ը, 1 նոյեմբերին: Երէկ սաստիկ փոթորիկ էր, որպիսին մի քանի տարի է արդէն չէ եղել: Տեղեկութիւններ են ստացված նուերի խորտակման մասին:

Վիլհելմ, 1 նոյեմբերին: Կայսրը ունգարական պատգամաւորութեան հանդիսաւոր ընդունելութեան ժամանակ զանազան ճառ կարդաց, որի մէջ ասված է. «Կաշնակիցներին հետ կատարեալ համաձայնութիւն ենք մէջ գտնվելով, ժողովուրդները բարօրութեան ամենահաստատուն գրաւական տեսնում են խաղաղութեան պահպանման մէջ»:

Բոլոր կարիքները հաւատացնում են, որ դէպի խաղաղութիւն են ձգտում: Կը ցանկայի յայտնել ուրախալի լուր, որ խաղաղութեան սպասող պիտեան ծանր բեռը թեթեւացաւ: Գեմէլ պատգամաւորին, որը յայտնեց, թէ այժմ կարելի է կատարելապէս հռաւառ ընծայել խաղաղութեան պահպանմանը, կայսրը պատասխանեց. «Սակայն պէտք է մի փոքր զգուշ լինել: Այդ բոլորը միայն յոյսեր են, որոնց իրադրման համար դեռ ժամանակ է պէտք»:

Բեռլին, 1 նոյեմբերին: Միամի պրինց Գաւառի ճանապարհ ընկաւ դէպի Լիվադիա: Նա բերում է Թագաւոր Կայսրին Սիմալի թագաւորին ինքնադիր նամակը և Միամի բարձրագոյն շքանշանը, Մալա-Շակիրի շղթայով, որ արժում է միայն թագաւորող անձինքներին:

ԲՈՒՆՆՈՒՆՑՐԵՍ, 2 նոյեմբերին: Բիւ-Գրանդէ-դ-Սուլ նահանգում ապստամբութիւնն աշողութեամբ պսակվեց: Գնեբալ խիղոր-Գոնդալէս շարքից ապստամբներից, 5000 զինուորված մարդիկ գնում են հիւսիսային ուղղութեամբ: Բիւ-Գրանդէի նահանգապետ Կաստիլիօ, երեկ կանցնի ապստամբների կողմը:

ՇԱՆՆԱՅ, 2 նոյեմբերին: Չինաստանում եւրօպացիների դէմ յուզմունքը շարունակվում է: Չինական կառավարութիւնը աշխատում է կուսցնել Անգլիան Ռուսաստանի հետ և դիտաւորութիւն չունի կատարել եւրօպական պետութիւնների պահանջները: Չինաստանի և Նապոլիտի մէջ համաձայնութիւն կայացաւ, որի հիման վրա, եւպոնական և չինական նաւատորմներ, հարկաւոր դէպքում, պէտք է համաձայն գործեն:

ԿԱՋԱՆ, 2 նոյեմբերին: Տիֆոլ հիւանդանայու մասնաւոր դէպքերի մասին տեղեկութիւններ ստանալու պատճառով, նահանգի ղեկաւորի կարգաւորութեամբ Նադիրիսի և Յիվիլիկի գաւառներում արած ճանապարհորդութիւնից վերադառնալով, նահանգական տեսուչ, բժշկապետ Մանդէլտատ հաղորդեց «Казанский Листок» լրագրի խմբագրութեանը, որ իր տեսած 157 տիֆով հիւանդացանները բոլորն էլ որովայնային տիֆ ունէին, որի դէմ կուսելը, շատ աւանդների ծանր դրութեան պատճառով, չափազանց դժուար է: Այս Մանդէլտատ ասում է, որ Յիվիլիկի գաւառի մի քանի աւանների դրութիւնը ճնշող տպաւորութիւն է գործում և որ այդ տարափոխիկ հիւանդութեան դէմ կուսելը համար անհրաժեշտ է ազգայնականութեանը ուսեստի պաշար հասցնել: Նահանգապետն արդէն կարգադրութիւն արտա անչապաղ ալիւր ուղարկել տիֆ հիւանդութիւն տարածված տեղերը:

ԲԵՐԼԻՆ, 2 նոյեմբերին: Շարժումները բանկեր Էդուարդ Մասս երէկ ոստիկանութեանը յայտնեց, որ նա վառնել է իրան յանձնված 400,000 մարկ փողը: Այդ գումարը միջին են որբեր 100,000 մարկ և 20,000 մարկ եկեղեցական գրամները: Մնանկութիւնը հետեւանք է բանկերի չույլ կանցնել: Վնասը, որպէս ասում են, 600,000 մարկ գումարի է հասնում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերին: Հրատարակված է Բարձրագոյն մանիֆէստ, որով Ֆինլանդիայից ևս արգելվում է հացահատիկներ արտահանելը: Պետական խորհրդի անդամ Ալեքսանդր Ալեկիւի: Ա. բազա սովեաների օգտին նուրից իր տան ամսվայ ուժերը, որ 9,800 բուրդ է անում:

ՎԻՆՆԱ, 4 նոյեմբերին: Ունգարական պատգամաւորութեան արտաքին գործերի յանձնաժողովում կոմս Կառնօլի, ի միջի այլոց, ասեց. «Առանձնապէս մտերմական դարձաւ մեր յարաբերութիւնները Գերմանիայի հետ աշնանային զորախաղերից յետոյ, որոնց ներկայ էր գերմանական կայսրը: Կրօնշատեան անցքերի մասին եղած դատողութիւնները չափազանցած էին. դրանց հետեւանք էր բացառապէս Ֆրանսիայի և Ռուսաստանի բնական սնունդային: Սկերիայի հետ յարաբերութիւնները բաւական լաւացել են Ալեքսանդր թագաւորի այցելութիւնից յետոյ իշխում: Գարգանէլի վերաբերեալ հարցում թիւրքան մի քանի զիջումներ անելով Ռուսաստանին, ղեկավարվեց օրինական իրաւունքով: Պրինց Ֆերդինանդին բուրգարական իշխան ճանաչելու հարցը, ղեկաղաքաւոր, նախկին դրութեան մէջ է գտնվում. մեր պետութիւնը առիթ չունի չօգտիւլ այդ փափուկ խնդրը, որովհետեւ անաշողութիւն է նախատեսում: Բոլորական կառավարութեան խնդիրը վարմունքը խրախոյսի արժանի է. նրան միայն պէտք է խորհուրդ տալ ամենայաւ յարաբերու-

Թիւերն պահպանել թիւերի տեսակէն հետ և խոստովել երկուշաբթի ձեռնարկութիւններէն: Ընդհանուր դրութիւնը, միմիայն կարծիքով, խաղախոսութեան պահպանման նպատակով է: Մարկիդ դի-Բուդիսի տեսակցութեան մասին միմիայն զգուշացի հետ, դի-Բուդիսի նոր բացատրութիւններ տուեց, որոնք ոչ մի վտանգ չեն յարուցանում:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 նոյեմբեր: Ազնական կալուածական բանկի գրականութիւնը կատարված տիրաժի ժամանակ զիւարար գումարները տարան հետեւեալ թիւերով:

№ սերիայի	№ տոկոսի	Գումարը	№ սերիայի	№ տոկոսի	Գումարը
15,162	25	200,000	882	2	5
1,406	17	75,000	5,621	50	5
2,961	19	45,000	11,792	35	5
8,609	39	25,000	6,381	10	5
6,190	29	10,000	8,615	46	5
4,092	29	10,000	2,344	28	5
407	49	10,000	3,555	12	5
4,207	43	800,000	9,296	14	5
14,093	22	5,784	37	5	5
7,635	13	6,713	42	5	5
9,051	33	14,417	20	5	5
7,588	9	12,342	37	5	5
2,704	11	3,666	37	5	5
15,279	41	12,485	49	5	5
1,851	29	15,555	5	5	5
15,690	24	15,336	18	5	5
13,177	4	9,700	32	5	5
9,987	21	15,057	38	5	5
2,102	22	11,751	5	5	5
648	41	3,166	42	5	5

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 1-ին

Լծողների վրա 10 ֆունտ արծէ . . .	102	65	4
Բերքների վրա 100 մարկ . . .	50	40	2
Փարբիդի վրա 100 ֆունտ . . .	40	70	2
Ոսկի . . .	8	22	2
Մարտային կուպոններ . . .	164	—	—
Արծաթ . . .	1	14	2
Բորսային դիսկոնտո . . .	6 1/2	8	2
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . . .	99	25	2
— — — 2-րդ . . .	99	62	2
— — — 3-րդ . . .	—	—	—
— — — 4-րդ . . .	—	—	—
— — — 5-րդ . . .	—	—	—
— — — 6-րդ . . .	99	25	2
6% ոսկեայ բէնտա . . .	165	—	—
4% ոսկեայ փոխառութիւն . . .	—	—	—
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	—	—	—
— — — 2-րդ . . .	97	75	2
— — — 3-րդ . . .	98	—	—
Ներքին 5% առաջին փոխառութ. . .	232	—	—
— — — երկրորդ . . .	215	—	—
Պետական. երկաթուղային բէնտա . . .	101	—	—
5 1/2% բէնտա . . .	—	—	—
4% ներքին փոխառութիւն . . .	92	50	2
5% գրաւ. թղթ. աշխ. կալ. բանկի . . .	99	62	2
Ազն. կալ. բանկի խաղաղութեան . . .	—	—	—
գրաւ. թղթ. . .	196	50	2
5 1/2% վկայար. գրաւ. հող. բանկի. . .	102	—	—
4 1/2% գրաւական թղթի կալուած. . .	—	—	—
փոխ. կրեդիտ. ընկեր. մետաղ. . .	147	25	2
— — — թղթայ. . .	97	50	2
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . .	—	—	—
ընկերութեան օրդինացիաները. . .	98	25	2
Մոսկվայի քաղաք. օրդինացիաներ. . .	97	25	2
Օդեսայի . . .	98	50	2
Թիֆլիսի . . .	—	—	—
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. . .	—	—	—
— — — փոխառութիւն . . .	—	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը . . .	—	—	—
խաղաղ է:	—	—	—

Խմբագիր-հրատարակող՝ Գ.Ի.Գ.ՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգենավների կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻՑ դէպի ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած ԵՒ ՓՈԽԱԳԱՐՁ

Բաթուլից Մարսել, ժամկով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս:

ԲԱՌՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՎԱՐ ԳՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 6/18 նոյեմբերի	—	—	—
— 20 նոյեմբ. (2 հոկտեմբերի)	—	ՍԻՐԿԱՍԻ	ԲՕՇԷԼ
— 4/16 դեկտեմբերի	—	ԱՆԱՏՈԼԻԱ	ԳԱՐՐԻԳ
— 18/30 դեկտեմբերի	—	ՄԻՆԳՐԷԼԻԱ	ՃԻՌՈՒՆ

և այլն, երկուշաբթի մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ: Տօմարների գները ուղղակի երթևեկութեան Բաթուլից դէպի Պարիզ խկական գնի պակսեցրած են:

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճ զիմել ընկերութեան ագէնտներին. ԲԱՌՈՒՄԻՍ պ. Գարանիօնին, Նաբերեժնայա, Թիֆլիսում պ. Վիկտոր ԳՄԱՆՈՒՆ, Միշին-փողոցում, Նախկին գներալ Տէր-Ասատուրով տանը, ԲԱՌՈՒՄ, Սամսոն Դիլդարովին, Կօլի-բիակինսկայա հրապարակ, և ՆՕՎՕՐՈՍԻ ՍԿՈՒՄ պ. Լուի Բիւօնին:

4—6 (Ե. 2.)

ԲԺՇԿԱՊԵՏ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Տեղափոխել է Գօլովնիսկի Պրոպէկտ ա. Միգոնի, № 5, Թիֆլիսի ժողովարան հանգչայ:

4—5

КАНДИДАТЪ УНИВЕРСИТЕТА

ищетъ уроковъ.

Адресъ. Артиллерійская улиц. № 4, д. Яковлевой.

Можно видѣть съ 12 ч. дня.

3—5

Լոյս տեսաւ և վաճառվում են Թիֆլիսում կենտրոնական գրաքանութանը և «Տարազի» խմբագրութեան մէջ, իսկ Շուշի—Աբրահամեանցի գրաքանութանը:

1) Աղա-Մուհամմէդ Շահը Շուշում գինը 2 ֆոպէկ:

2) Վիլհէլմ Թէլլ, Լամարտի . . . 20

Թարգմանութիւն Լ. Առաքելեանի:

ՆՈՐ ՀԻՐԱՆՈՑ

„ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍԻՄ

Քաղաքի կենտրոնում, Գօլովնիսկի պրոպէկտի վրա: Գեղեցիկ և մաքուր կահաւորված սենեակներ. օրը 60 ֆոպէկից մինչև 5 րուբլի. ամսով մեծ զիջում է անվում:

Կերակուրները թարմ և համով:

НОВЫЕ НОМЕРА

„ДАНІА“

ВЪ ТИФЛИСѢ

въ центрѣ города, на Головинскомъ проспектѣ. Изящно и чисто меблированныя номера отъ 60 коп. до 5 руб. въ сутки; помѣсячно большая уступка.

Пища свѣжая и вкусная.

29—36

ВЫСОЧАЙШЕ
ТОВАРИ-

МЕХАНИЧЕСКАГО И ЧУ-

УТВЕРЖДЕННОЕ
ЩЕСТВО

ГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА



БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ

ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Шеретовыхъ, вальцовыхъ поставовъ крупосѣкъ, бураторовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверио. Лесопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и свѣа. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ грабелъ «Голлинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди.

Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножелезныхъ дорогъ.

Складъ локомотивовъ, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми ба- рабанами и конныхъ приводовъ извѣстной фирмы Клейтонъ и Шутлѳортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ.

Главный складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Желѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ

Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н/Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реального училища кв. № 8.

86—100 (Ե. 2.)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍԱՐՊԻՆԿԱ ԱՍՎԱԾ ՀԻՒՍՈՒԱԾԻ

„Ա. ԲԷՆԴԵՐ, ՈՐԻՆԵՐՈՎ, Ա. ՍՏԵՓԱՆՈՎ, ԵՒ Վ. ԲԷՆԴԵՐ“

ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐԻՒՄ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

ՍԱՐԱՏՕՎԻՑ

Յայտնում է Թիֆլիսի պատուելի հասարակութեանը, որ բաց է անում յատուկ մագազին սեփական պատրաստութեան սարպինկա ամալած հիւսուածքը, աղուինները և բամբակեայ գուլպաների գործուածները Թիֆլիսում ծախելու համար:

Սարպինկա մի հիւսուածք է, որը պատրաստվում է ձեռքի միջոցով և այդ նիւթից կարող են պատրաստվել կանանց ամենալեզո գլխարկներ, մանուկների գլխարկներ և տղամարդկանց շապիկներ:

Մագազինը գտնվում է Թիֆլիսում, Սոլովակում, Աղաբաթովի տանը, որտեղ առաջ գտնվում էր Զիթախովի գրասենեակը:

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՍ ՄԱՍ

1—20

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ մէջ բացված է հանգանակութիւն կամաւոր նուիրատուութիւնների յօդուտ Բուսատանի ներքին նահանգների սովեալ գիւղական աղաքակութեան: Նուիրատուութիւնների ընդունելութիւնը տեղի է ունենում ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամ կէսօրից յետոյ:

2—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ 20-ին նոյեմբեր ամսի 1891 ամի, երկշաբթի 8 ժամին, լինելու է առնորդ (առանց կրկնաձրդի) կապալով տարու նոյն զարդի կալուածքը № 49 (ընծայած հանգուցեալ Գարուի թիւն Օբյեկտիցի), որը գտնվում է Կուր գետի հեղեղատի «Սաղի» վրա: Պայմանաթուղթը կարելի է կարգաւ հոգաբարձութեան գրասենեան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը:

2—3

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առևտրական հաշարարութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տօկոսների լիակատար աղուակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 1%—ից մինչև 12% վաճառվում է եղբարց Թովիանովների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Թիֆլիս, Нагорная ул., № 9. Օտարաբաղադրացիք զիմում են վերջին հասցեով՝ Ս. Ս. Մա- նուէլյանց:

Գինն է 1 ռուբլի: Փօստի ծախս 21 Կ. Գրավաճառներին զիջում կը լինի:

31—150